

ԱԼԻՍԱ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ՀՐԱՄԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՄԻՑ

Ժամանակակից լեզվաբանների ուշադրության կենտրոնում է լեզվի հաղորդակցական գործառույթը, ուստի լեզվական այս կամ այն երևույթի վերլուծությունը ավելի հաճախ կատարվում է գործաբանական լույսի ներքո, այսինքն՝ լեզվաբանական հետազոտության կենտրոնում են գտնվում լեզվական միավորների կիրառման պայմանները՝ խոսքային գործունեության բաղադրիչները և հաղորդակցվողների հարաբերությունները:

Ակնհայտ է, որ լեզվի դերը մարդկային պահվածքի հարցում առավել ուշադրության է արժանանում հենց լեզվագործաբանական հետազոտությունների շրջանակում: Գործաբանությունը խոսակցի, տեղեկույթի հասցեատիրոջ վրա ունեցած ազդեցության տեսանկյունից լեզվական միավորների ուսումնասիրման հայեցակերպ է¹, այսինքն՝ նրա խնդիրը կապված է խոսքի ընկալման և զգացմունքների հետ, սուբյեկտիվ գործոնի հետ: Լեզվական միավորներն օգտագործվում են ոչ միայն մտքի կազմակերպման, հաստատման, այլև զգացմունքների արտահայտման համար: Անհնար է բավարար մակարդակով ուսումնասիրել լեզվական համակարգը առանց մարդկանց զգացմունքները հաշվի առնելու:

Հաղորդակցական-գործառության նշանակության մասին խոսելիս պետք է նշել, որ նախադասությունները տարբերվում են նաև հաղորդակցական դիտավորությամբ: Հաղորդակցական կարգը ներկայացնում է խոսքի հեղինակի հաղորդակցական միտումը, այսինքն՝ ուրիշին ինչ-որ բան հաղորդելու ցանկությունը, այլ կերպ ասած՝ այն հաստատում է ասույթի հաղորդակցական նպատակը²:

Հաղորդակցական դիտավորությունը յուրաքանչյուր նախադասության անհրաժեշտ հատկանիշն է. առանց դրա չկա նախադասություն՝ որպես հաղորդակցական միավոր, որն ուղղված է շփման ընթացքում որոշակի լեզվական գործառույթի իրականացմանը, այն է՝ լեզվական միավորների՝ մարդու զգացմունքների արտացոլման միջոց հանդիսանալը: Միևնույն նախադասու-

¹ Խլղաթյան Ֆ. Հ., Ոճաբանական բառարան, Ե., 2000:

² Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:

թյունը կարող է ծեռք բերել տարբեր նրբերանգներ՝ կախված խոսքաշարից և այն հաղորդակցական նպատակից, որը հետապնդում է խոսողը:

Ըստ հաղորդման նպատակի կամ խոսողի վերաբերմունքի՝ նախադասությունները լինում են *պատմողական, հարցական, հրամայական, բացականչական և ըղձական*³: Նախադասությունների այդ հիմնական տեսակները միմյանցից տարբերվում են ոչ միայն իմաստային ուղղվածությամբ, այլև իրենց կառուցվածքով, հնչերանգով, շարահյուսական տարբեր միավորների գործածությամբ և այլն:

Հրաման արտահայտող նախադասությունների ուսումնասիրության ժամանակ չափազանց կարևոր է միջանձնային խոսքաշարը, այսինքն՝ այն խոսքաշարը, որտեղ իրականանում է նախադասությունների փոխանակումը խոսողի և լսողի միջև: Այս խոսքաշարի շրջանակներում հաշվի են առնվում հասցեատիրոջ և հասցեագրողի միջև հարաբերությունները, նրանց կապող խոսքային ակտերի բնույթը, հաղորդակցական նորմերի և պայմանների իրագործումը: Այսինքն՝ լեզվագործաբանական տեսանկյունից հրամանի արտահայտման միջոցների ուսումնասիրության ժամանակ առաջնային են դառնում հաղորդակցական կարգի նորմերը:

Խոսողը հրամայական նախադասության միջոցով իր հետ հաղորդակցվող անձին կամ անձերին դրդում, հորդորում, հրահրում է այս կամ այն գործողությունը կատարելու կամ, ընդհակառակը, դադարել այն անելուց: Հրաման արտահայտող բառն իր վրա է կրում նախադասության տրամաբանական շեշտը, որն արտահայտվում է հրամայական հնչերանգի ու շեշտի միջոցով: Այս կարգի նախադասությունները բաժանվում են երեք խմբի՝ բուն հրամայական, հորդորական⁴ և արգելական:

Կարելի է առանձնացնել հրամանի արտահայտման որոշ ասպեկտներ՝ պայմանավորված խոսողի խնդիրներով, ինչպես՝ համոզելու և խոսակցի վրա ազդելու, գնահատման և հույզերի արտահայտման, խոսակիցների միջև հարաբերությունները կարգավորելու և այլ նպատակներ:

Ըստ բովանդակության պլանի՝ հրամանի արտահայտման դասակարգման համար կարելի է հիմք ընդունել հետևյալ հատկանիշները՝

³ Հայ քերականագիտության մեջ ըղձական նախադասություններն առանձին տեսակ է համարել է պրոֆ. Ֆ.Խլդաթյանը (Խլդաթյան Ֆ.Հ., Ժամանակակից հայոց լեզու, մաս Գ, Ե., 2010):

⁴ Որոշ լեզվաբաններ հորդորական նախադասությունները բուն հրամայականի մի տեսակ են համարում, որոշ մասնագետներ էլ *հորդորական* տերմինն առաջարկում են հրաման արտահայտող բոլոր նախադասությունների համար (Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա. Հայոց լեզու, 2-րդ մաս, Ե., 1975, էջ 124):

ա) կամային ակտիվություն, որի մեջ դրսևորվում է արտահայտվող անձի սուբյեկտիվ ակտիվությունը,

բ) իրական գործողության հակազդում, որի մեջ դրսևորվում է սուբյեկտի յուրատեսակ արծագանքը իրական գործողության հանդեպ,

գ) գնահատում և ընդգծված վերաբերմունքի արտահայտություն:

Այս ասպեկտները, որոնց մի մասը հաճախ միասնաբար է հանդես գալիս խոսքում, կարող են առանձնանալ, միմյանցից անջատվել ոչ միայն իրենց յուրահատուկ հաղորդակցական խնդիրներով, այլև խոսակիցների դերով ու նրանց հաղորդակցական հետաքրքրություններով, խոսքի արվեստով, նախընտրած շարահյուսական կառույցներով և այլն:

Այսպիսով՝ հրաման արտահայտող կառույցների կիրառման հիմքում ընկած է խոսողի՝ դրանց միջոցով տարբեր հուզաարտահայտչական երանգներ արտահայտելու պահանջմունքը⁵, այսինքն՝ խոսողի ցանկությունն ու կամքը.

- իմաստաբանական (բովանդակային) պլանում այդ կամքը կարող է դրսևորվել իբրև անմիջական հրաման, հորդոր, թելադրանք, խնդրանք, պահանջ, հանձնարարություն, սպառնալիք, զգուշացում, պատվեր, պատվիրան, կոչ, ղոջույն և այլն,

- արտահայտության պլանում այն առանձնանում է հրամայական-հորդորական ինչերանգով, եղանակային որոշակի արտահայտությամբ,

- գործառական պլանում՝ հաղորդակցական ինքնատիպ միտումով (նպատակադրումով), ռճակական բազմազան կիրառություններով:

Վերոշարադրյալից բխում է, որ հրամայական նախադասությունը հրամանին զուգահեռ արտահայտում է նաև բազմազան կամային ու զգացումային երևույթներ: Այս ձևերով են արտահայտվում մարդկանց ամենաբազմազան խնդրանքները, զանազան նախազգուշացումները, հորդորները, արգելքներն ու պատվերները, մաղթանքները և այլն:

Հրամանի արտահայտման միջոցներն ունեն ոճական մեծ արժեք հատկապես աստվածաբանական գրականության մեջ, որտեղ ակներև են հրամանի արտահայտման ամենաբազմազան նրբերանգային իմաստները: Աղոթքներում բոլոր ողորմություններն ու խնդրանքներն առկա մտված դրսևորվում են հրամայական կառույցների միջոցներով:

Անգնահատելի է նրանց դերը նաև գեղարվեստական գրականության մեջ, ցանկացած ժանրի երկերում, առավել ևս՝ չափածոյում:

⁵ Պետրոսյան Հ.Զ. Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Շարահյուսական մակարդակում հրամանի այս կամ այն իմաստային որսևորման համար բերենք բնագրային օրինակներ⁶:

1. Ըլուն հրամայական. «Զարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա, Զնջեցե՛ք աշխարհն ապական ու հին, Թող քարը քարի վրա չմնա, Ողջը մատնեցե՛ք հրին ու սրին (Վ.Տ.): «Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն, ժիր դայլալի՛ր, ի՛ն սիրա-սուն...» (Ս.Կ.):

2. Արգելական հրամայական. «Մի՛ տրտնջա ցավիդ համար - սիրո ամատ աղբյուր է նա, Մի՛ ափսոսա մեղքիդ համար - սիրտը մաքրող սուրբ հուր է նա. Թե սերն անցնի, մի՛ մորմոքա - կմնա հուշ, մաքուր է նա...» (Վ.Տ.):

3. Հոռոտրական հրամայական. «Ղու մի՛ անցիր առֆալտ ճամփով, գերա-դասիր ճամփա՝ շինել» (Պ.Ս.):

4. Գործողության կատարման անհրաժեշտություն. «Ղու սիրո հետ միշտ հա՛շտ ապրիր, բայց խուս մի՛ տա տառապանքից. Նա սրբում է աչքը փոշուց, նա մաքրում է հոգին ժանգից» (Պ.Ս.):

5. Գործողության կատարման առաջադրություն, կոչ, հանձնարարու-թյուն, առաջադրանք. «Հիշի՛ր և փա՛ռք տուր մեզ, ընկածներին բոլոր, Փառքը երգի՛ր նաև ապրողներիդ, Եղիր երգի մեջ էլ, ինչպես մարտում՝ հերոս: Սիրի՛ր, բայց թշնամուն մտաբերի՛ր» (Պ.Ս.):

6. Խրատական և ապահանջողական իմաստներ, զգուշացում. «Հորըդ նման հպարտ զգա, որ ոչ մեկի տուն չես քանդել, Ոչ մի ազնիվ խոսք չես կտրել, ոչ մի ազնիվ միտք չես բանտել...» (Պ.Ս.): «Ղու մի՛ եղիր կյանքում տիաս՝ Ղու հասկացի՛ր հենց այս գլխից, մի՛ մոռացիր երբեք, տղա՛ս, Ազնվությունն այն է միայն, որ չի փոխվում՝ ոնց էլ շուռ տաս» (Պ.Ս.):

7. Աղայանք, խնդրանք, թախանձանք. «Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ, Անա-դարտ մնամ Այն ճահճանման աղտ-աղարտի մեջ, Որ դժգոհություն բառով է կոչվում: Դժգոհությունից ես շատ եմ դժգոհ, Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ: Եվ ասեմ՝ ինչով. Բարեխոս եղիր իմ և իմ միջև, Որ բանն ավարտվի ինքնահաշտությամբ» (Պ.Ս.):

8. Մաղթանք. «Բարի երազս՝ ձեզ, սիրելիներ՛ր, Ու ձեր մղձավանջն ինձ, ձեր սիրելուն...» (Պ.Ս.):

Հրամայական նախադասության ենթական հաճախ զեղչվում է, որով-հետև բայի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ ենթական խոսակիցն է: Սակայն դերանուն ենթական կիրառվում է և մեծ մասամբ դրվում է նախադաս, երբ

⁶ Հրամանի արտահայտման երանգների միջև որոշակի սահմանագիծ դնելը երբեմն դժվար է, այնուամենայնիվ, փորձել ենք խմբավորել՝ նկատի ունենալով նրանց առավել բնորոշ, առավել էական հատկանիշը: Բերված բնագրային բոլոր օրինակները քաղված են Արևակից, www.eanc.net (Արևակ-Արևելահայերենի ազգային կորպուս):

անհրաժեշտ է ուրիշներից առանձնացնել այն մարդուն, որին ուղղվում է հրամանը: Օրինակ՝ «Ղու բոլորին քեզանով մի՛ չափիր» (Ռ.Դ.), «Ղու շարունակությունը լսի՛ր» (Շ. Թաթևյան):

Ղերանուն ենթական հիմնականում ետադաս է, երբ անհրաժեշտ է մեղմ խնդրանքի երանգ արտահայտել, և այսպիսի դեպքերում հրամանը փոխվում է աղաչանքի: Օրինակ՝ «Հայտնվի՛ր դու ինձ խաղաղ, անթախծ, ամոքի՛ր սիրտս քո անհուն սիրով» (Վ.Տ.):

Հատուկ նպատակադրումով ղերանուն ենթական երբեմն իր վրա է կրում տրամաբանական շեշտը, և հրամայական եղանակով գործածված բայը, անշեշտ մնալով, փոխում է իր բնույթը: Օրինակ՝ «— Ես հիմա ակադեմիա եմ գնում, դո՛ւ էլ հագնվիր, գնա նրա մոտ, խոսի՛ր» (Ա. Սահինյան):

Ակնհայտ է, որ հրամանի արտահայտման ժամանակ վճռական դեր է կատարում ստորոգյալը: Լինելով գործողության նկատմամբ անհատի վերաբերմունքի դրսևորումներից մեկը՝ հենց հրամայական եղանակն է հրամանի արտահայտության ամենատարածված ձևը, որն ինքնատիպ բնութագիր ունի հատկապես ռաբանական մակարդակում:

Ստորոգումը, որի միջոցով և որի մեջ է դրվում հրամանի և հորդորի իմաստը, սակայն, կարող է արտահայտվել ոչ միայն հրամայական, այլ նաև ըդձական, ենթադրական և հարկադրական եղանակների բայածերով, որոնք ստանում են հրամանին և հորդորին բնորոշ հնչերանգ և արդեն իրենց իմաստի (և ոչ թե ձևի) մեջ են ամփոփում վերոհիշյալ հուզաարտահայտչական երևույթները:

Անշուշտ, եղանակաժամանակային հարացույցի յուրաքանչյուր միավոր իր ամբողջական նկարագրով ներկայանում է ձևաբանական, շարահյուսական և ռաբանական մակարդակներում: Այստեղ որոշակիորեն արժեքավորում են բայական համակարգի միավորների ռձական հնարավորությունները: Նրանց իմաստների ընկալման և գնահատման համար էական դեր են կատարում հնչերանգը (ամբողջ բեռը ընկնում է արտաբերական հնարավորությունների վրա), նախադասության բովանդակությունը, անհատական ընկալման գործոնը:

Հրաման արտահայտող նախադասությունը՝ իբրև շարահյուսական կարգ, ունի դրսևորման բազմազան միջոցներ: Հրամանի կարգի արտահայտման հիմնական լեզվական միջոց է ուրիշի ուղղակի խոսքը: Այն կարող է լինել ինչպես երկկազմ, այնպես էլ միակազմ նախադասություն:

- Երկկազմ հրամայական նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել.

1. Սահմանական եղանակի ներկա ժամանակի երկրորդ դեմքով. «Գնում ես ամայի տեղ, շենք ես շինում, ջրանցք ես հանում, քիչ թե շատ հարմարավետ կյանք ես ստեղծում և գնաս բարով, այստեղ էլ անելիք, չունես» (Ժ.Ավետիսյան):

2. Ըղծական եղանակի բայածներով, օրինակ՝ «Սողոմոն՝, անիծյալ լինես, եթե մոռանաս այս հողը» (Բ.Վ.): Տարածված է նաև բայի ըղծական եղանակի հոգնակի առաջին դեմքի գործածությունը հատկապես կոչ արտահայտող հրամայական կառույցներում, երբ խոսողը խոսակցին թելադրած գործողությունը դիտում է որպես նաև իրեն վերաբերող գործողություն. այս դեպքում նախադասությունը ձեռք է բերում հատուկ ոճական նշանակություն: Օրինակ՝ «Թողնենք օթևանները, ելնենք հանդես...» (Ղ.Ղ.):

3. Ենթադրական եղանակի ապամոնի ժամանակի երկրորդ դեմքով. օրինակ՝ «Ավելորդ խոսելու կարիք չկա, վաղը հիվանդանոց կգնաս» (Գ. Սահարի): «Բայց քո հոգում եթե լինի բարու՛, լավի՛, սիրո՛ կարոտ, Ղու չե՛ս հոգնի, դու կջայլես, կբարձրանաս դու սարն ի վեր» (Պ.Ս.):

4. Հարկադրական եղանակի ապամոնի ժամանակի երկրորդ դեմքով, օրինակ՝ «Միայն թե ներողամիտ պիտի լինեք և վստահեք իմ ճաշակին» (Ալ. Թովչյան):

5. *Տեսնել* բայը հրամայականը, կորցնելով իր նյութական նշանակությունը, այլ բայերի հրամայականի կամ այլ եղանակների հետ արտահայտում է հանձնարարություն, գործողության կատարման անհրաժեշտություն, ուշադրության հրավիրում, սպառնալիք, զգուշացում: Օրինակ՝ «Տե՛ս, դաս լավ սովորի՛ր, հա՛: Տե՛ս, դու էլ հասար նպատակիդ»:

6. *Թողնել* բայի հրամայականը այլ բայերի հրամայականի և ըղծականի հետ արտահայտում է պատվեր, խրատ, զգուշացում, խնդրանք և այլն: Օրինակ՝ «Թող փախի՛ր: Անմիջապես թող ե՛կ: Թող ինչ ուզում է լինի. մի՛ գնա»: «Հանուն գալիք վառ խարոյկի ես պատրաստ եմ այսօր ծխալ, Հանուն վաղվա ճշմարտության թող որ այսօր լինեմ սխալ...» (Պ.Ս.): «Թող ավանդական մեր օջախներում Կրակը երբեք, երբեք չհանգչի, Չմեռվա մեջ էլ մեզ հյուր գա գարուն, Հարսանյաց երգը անուշ կարկաչի» (Սարմեն):

7. Հրամայական նախադասությունը խրախուսական, հուզող, մեղմ, մտերմական երանգ է՝ ստանում, երբ ստորոգյալը կրկնվում է: Օրինակ՝ «Լուսնակ գիշեր Սիրտս կուլա քեզ համար, Յար, արի, արի, արի, Ախ, արի, արի... Գիշեր-ցերեկ Ստածում եմ քեզ համար, Յար, արի, արի, արի Ախ, արի, արի... Սարից իջա, Յարս դռան կանգնած էր Յար, արի, յար, արի, Ախ, արի, արի... » (Կոմիտաս):

• Հրամանի արտահայտման կողմնակի միջոցներ են նաև ծայնարկությունները և կոչական բառերը. նման դեպքերում նախադասությունը մեղմ, համոզող, մտերմական երանգ է ստանում:

1. Ծայնարկությունները, եթե նկատի առնենք այդ բառերի բուն արժեքը, արտահայտում են մարդու անմիջական զգացմունքը և կամքը. դրանք հիմնականում արտահայտչական բնույթ ունեն և նախատեսված են ոչ թե հաղորդակցման, այլ արտահայտության համար: Օրինակ՝ «Ա՛խ, մի՛ նվա: Հայրդ երբեք չէր հանդուրժում նվացողին... Շատ ավելի լավ է, տղա՛ս, դառն արցունքով աչքդ ցողի՛ր Ու ըռ ճամփան շարունակի՛ր» (Պ.Ս.):

Հրամայականի հետ հաճախակի գործածվող ծայնարկությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա/ կամային-դիմողական բնույթի (դե՛/հ/, էեե՛, հե՛, ջա՛ն), բ/ կշտամբական-պարսավական (ա՛խ, ա՛յ, ա՛յ - ա՛յ - ա՛յ, թու՛/հ/, փու՛/հ/, ֆու՛/հ/), որոնք կարող են գործածվել համապատասխան բացականչական կամ շեշտային առոգանությամբ: Օրինակ՝ «Թո՛ւհ... Բայց սպասիր, համբերիր, եղբայր, Ոչ մի բան աշխարհում հավերժական չէ...» (Ռ. Մարուխյան):

Կոչական բառերը, ընդհակառակը, հաղորդակցական արժեք ունեն, և նրանց գործածությունը ավելի շուտ վերաբերում է լեզվի ոճաարտահայտչական ու եղանակավորման պլանին. գրավել հաղորդակցի ուշադրությունը, որին ուղղված է խոսքը:

Կոչականն ունի քաղաքավարական, պաշտոնական, մտերմական-փաղաքշական և այլ ձևեր: Մտերմական-փաղաքշականի համար բուն կոչականի զուգակցությամբ գործածվում է *ջան* բառը, որը շարադասությամբ վերջադիր է և այս կերպ տարբերվում է կոչական ծայնարկություններից, որոնք խոսքին կարող են տալ նաև հանդիմանական երանգ: Հմմտ. ա՛յ որդի ջան, որդի՛ ջան:

Հրամայականի և արգելական հրամայականի բայածների հետ գործածվում են նաև հաստատական և ժխտական եղանակային-վերաբերող բառեր: *Ոչ* ժխտականով կազմված հրամայականն արտահայտում է խստություն, ընդհատում, վճռականություն. օրինակ՝ «Ո՛չ, ո՛չ, Աննա, մի՛ ասա այդ բանը, մի՛ ասա...» (Շիրվ.):

• Բարդ նախադասություններում հրամանի արտահայտման միջոցներն առավել հաճախ հանդիպում են պատճառահետևանքային իմաստ արտահայտող բարդ ստորադասական նախադասությունների զլխավոր նախադասության ստորոգյալի դերում: Այսպես օրինակ՝ պալմանի իմաստ. «Մի՛ տրտնջա: Եթե լավից ետ ես ընկել՝ ինքդ հասի՛ր...» (Պ.Ս.): «Մի՛ մռայլվիր, ի՛ մ սիրելի, թե հոգնել ես, էլ մի՛ մնա. Թե դաշտերին ես կարոտել, էլ մի՛ փակվիր դու իմ հովտում, Թե լեռներն են հեծվից դյութել, մի՛ թախծիր այս ստորոտում...» (Ս.Կ.):

Կամ՝ հիմունքի պարագա /քանի որ-ով սկսվող/. օրինակ՝ «Քանի որ լռելը քեզ համար մահ է, խոսի՛ր»:

- Բազմաբարդ այն կառույցներում, որոնց բաղադրիչ նախադասություններն արտահայտում են հրաման և կապված են միավորական, ներհակական, տրոհական և այլ հարաբերություններով. օրինակ՝ «Պա համար հարցեր տուր և պահանջիր, որ պատասխանեմ, և սպասիր, թե ինչ պատասխան պետք է տամ, դրա համար գոռա իմ ծեր ու հիմար գլխին, դրա համար բռնեցրդ խփիր սեղանին, դրա համար հեզնանքով ու քնծիծաղով նայիր իմ աչքերի մեջ»: (Մ.Գալշոյան): «Հպարտ եղիր, բայց ոչ գոռոզ (դատարկ մարդն է գոռոզանում)» (Պ.Ս.): «Ի՞նչ ես տանջում, կամ թույլ եղիր, կամ արի — Կամ հեռացի՛ր, ընդմիջտ գնա, կամ արի» (Պ.Ս.):

- Հրամանի կարգը կարող է ձևավորվել նաև միակազմ նախադասություններով.

1. միակազմ դիմավոր նախադասություններ, որոնց ստորոգյալն արտահայտված է բայի երկրորդ դեմքով, հիմնականում՝ հրամայական եղանակով, օրինակ՝ «Մի՛ դատիր, որ չդատվես»: Նույն սկզբունքով են կառուցված նաև այն կայուն կապակցությունները, որոնք անեծքներ են, օրինանքներ, սպառնալիքներ, ողջույններ և այլն:

2. Անորոշ դերբայի հրամայական կիրառությունը ուժգին և կտրուկ երանգ է հաղորդում, արտահայտում է խոսողի հոգեկան գերազանց լարվածությունը, առաջ է քաշում ոչ թե գործողի, այլ գործողության կարևորությունը և ընդգծում է հրամանի կարևորությունն ու լրջությունը: Օրինակ՝ «Վռնդել այդ անկոչ հյուրին, դուրս նետել նրան իմ հողից, իմ տերությունից» (Վրթ. Փափագյան):

3. Դասագրքերում և ձեռնարկներում առաջադրանքները հաճախ արտահայտվում են անորոշ դերբայով, այսպես օրինակ՝ «Արտագրել հատվածը և դուրս գրել մակբայները» և այլն:

4. Հրամայական բնույթի կարող են լինել նաև որոշ անվանական նախադասություններ. օրինակ՝ «Լռություն»: «Խաղաղություն՝ մեր ժամանակներին»:

5. Բառ-նախադասություններով. հորդորական բառ-նախադասությունը արտահայտվում է այնպիսի եղանակավորիչ բառերով ու ծայնարկություններով, որոնք նշանակում են դրդում, հորդոր որևէ գործողության նկատմամբ: Ինչպես՝ հերի՛ք է, բավական՛ է, հապա՛, հապա՛, դե՛ լավ, հա՛յդե և այլն: Օրինակ՝ «Ղե՛, իսկույն ձանապարհ» (Ղ.Դ.): «Ղուրս սենյակեն, հայդե, դուռը» (Ա.Ս.):

Ղե՛, դե՛ի ծայնարկությունները կիրառվում են նաև լավ, հա, է, հը, էիի բառերի հետ, որոնք հարստացնում են հրամանի արտահայտչական երանգը, ընդ որում դրանք կարող են և՛ դե ծայնարկության հետ միասին դրվել, և՛

առանձին՝ նախադասության վերջում կամ սկզբում. օրինակ՝ «— Դե՛ լավ, ստորագրիր այս հավատարմագիրը և զբաղվիր միայն քո գյուտով» (Օ. դը Բալզակ): «Այդչափ քնոտ մի խոսիր, էլի» (Վ. Փափագյան):

Այս ամենով, իհարկե, չեն սպառվում այն միջոցները, որոնք նպաստում են մեր լեզվի հրամայական նախադասությունների ոճաիմաստաբանական հնարների հարստացմանն ու բազմազանությանը: Բանավոր խոսքից գրականին անցել են տո, հա, ահ, է, ուհ կոչական ձայնարկություններ, որոնք արտահայտում են բարկություն, արհամարհանք, ծանծրույթ, դժգոհություն և այլն: Օրինակ՝ «— Տո՛ ձենդ կտրի՛, երեխա՛, էդպես բաներն են Սաքոյի ձեռովն անցկացել...» (Պ. Պ.):

Գովազդային տեքստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանցում ևս բաղկացուցիչ մասն են կազմում հրամայական նախադասությունները: Ինչպես՝ «Բիլլայ՛ն, ընտրի՛ր կյանքի պայծառ կողմը»: «Royal Armenia, ըմպի՛ր և ապրի՛ր», «Imunal, սովորե՛ք չիիվանդանալ»:

Խոսողի վերաբերմունքն արտահայտող կառույցների լեզվագործաբանական ուսումնասիրությունը շարահյուսության կարևոր և հետաքրքիր խնդիրներից է: Արդի լեզվաբանական միտքը որոշակի տեղ է հատկացնում լեզվի ոճաբանական վերլուծությանը, մի բնագավառ, որ ներառնում է այն բոլոր միջոցները, որոնք ի սպաս են դրվում խոսքի ոճավորմանը: Անժխտելի է, որ լեզվաբանական օրենքների, օրինաչափությունների և կանոնների իմացությունը, դրանց գիտակցված կիրառումը խոսքում նպաստում են խոսակիցների լեզվի գործաբանական արդյունավետությանը:

Means of Expressing Order in Armenian from the Point of View of Speech Pragmatics

Language units are used not only for organizing, proving the speaker's ideas but also for expressing his feelings. A thorough study of language system is quite impossible without taking into consideration human feelings. One and the same sentence can acquire different nuances depending on the context and the speaker's aim.

The interpersonal context, i.e. the context where the sentence exchange between the speaker and the listener is realized, is of utmost importance while studying sentences expressing order. The relation between the addressee and the addresser, the essence of speech acts connecting them, the realization of communicative norms and conditions are all taken into account within this context.

The fact that knowledge of linguistic rules, regularities and canons, their conscious usage in speech are greatly conducive to pragmatic productiveness of interlocutors' speech is undeniable.